# Արձանագրության 3

## «Զվարթնոց» օդանավակայանից մինչև Արգավանդ կամուրջ ճանապարհահատվածի բարեկարգման և դիզայներական ձևավորման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ՄԱԾՁԲ-18/73 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30.05.2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան Ե. Կարապետյան
Ա. Հարությունյան, Կ. Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

### 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Սուֆետ» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 3. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/73 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ՄԱԾՁԲ-18/73 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Սուֆետ» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել «Զվարթնոց» օդանավակայանից մինչև Արգավանդ կամուրջ ճանապարհահատվածի բարեկարգման և դիզայներական ձևավորման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

---

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ------------------------------ Տ. Իգիթյան

Անդամներ՝ ------------------------------ Ե. Կարապետյան

------------------------------ Ա. Կիրակոսյան

------------------------------ Կ. Հարությունյան

------------------------------ Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ------------------------------ Ա. Համբարձումյան